

ՄԵՌԵԼՈՑ

Գ.

ԸՆՏԱՆԻՔԻՆ ՍԳԱԽՈՐ...

Այլերն իր խիստ ան բանար, ու տեսնէր շարք միայն.
Փրթած իրմէ կեանքներուն սեւեր հագնիլը խորհուրդ.
Տրտում՝ անփորձ հոգիներ... ինչպէս սակայն, կարծր, ցուրտ
Կեանքէն իջնող այս ցաւին եւ մըտերիմ ալ այնքան...:

Անցնողն արցունքը սիրէ՝ իր ետեւէն, իրեն հետ
Կեանքին քախիծը հագնող հոգիներուն արփաքել:
Մեռնողը կոյս մ'է սառած, անհրապոյր, անարեւ...
Մեռնողը սիրտ մ'է փայլուն, յաւերժութեան մէջ ինկած...:

Ցաւէն դեղին այն զրոյսն զիսնար խորհուրդը այս մեծ.
Գիտնար հրնուանքը անհուն, կեանքին բացուող հոգիին...,
Երակներուն իր վիշտ, փալէր արիւնը նորէն...:

Մահը կամուրջ մ'է, հոգի, միջեւ բացուած կեանքներու:
Անվերջ ըսկիզբ մը լոյսի, ուր հոգիներ կը վառին:
Աստուածներու փառքին մէջ մահը ժրպիտ մ'է խորունկ...:

1943

ԱՆԵԼ

ՄԱՅՐԻՆԵՐՈՒ ԹԱՅ ՇՈՒՔԻՆ...

Մեղմիւ՝ անձրեւ՝ երկինք մը գործ մաղելէն...
Դառն ու ծաղիկ, կանաչ դողեր ալ կ'առնեն.
Երգը հովին՝ մերթ այնպէս թաց ու տրտում...
Ծառեր բարի՝ արտասուելէն կ'օրօրուին...:

Լուրջ՝ կը փալեմ, մայրիներու թաց շուրթին,
Լեցուն այնպէս, երգին ինչպէս է հոգին...
Երգեր տրտում՝ իմ օրերուն փաղցրութեամբ,
Ծառերէն վար, իմ երթներուն վրայ կուգան...:

Թաց հովերու, գործ ծառերու երկրնքին
Ինչ փաղցր է, փաղցր, մենութեան երգն այս նոր,
Երբ քեզ բերէ՝ հոգիներէն հեռաւոր,

Սէր-օրերու ըստեր նայուածքը լրոյն...:
Ու կը սիրեմ փալել այսպէս՝ յոյսով հին,
Նոր ու տրտում մայրիներու թաց շուրթին...:

1943

Ա.Լ.Ի.Ք